ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-26/21

ք. Երևան «17» 02 2026 թ.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը՝ ի դեմս աշխատակազմի ղեկավար–գլխավոր քարտուղար Դավիթ Առաքելյանի, ով գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Վելոֆիրմա» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Լուչիանո Կասագրանդեի, ով գործում է «Վելոֆիրմա» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից Պատվիրատուն և Կատարողը միասին (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է պաշտոնական պատվիրակության անդամների հյուրանոցային, կոնֆերանս սրահի և հյուրասիրության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված Ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված Ծառայությունը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության առավելագույն գինը կազմում է 3000000 (երեք միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքը հաշվարկվում է նաև Ծառայությունը Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն Պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագրի պայմանները կիրառվում են 2026 թվականի հունվարի 20-ից Կողմերի՝ միջև ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև Պայմանագրի հավելված N1-ով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը, բայց ոչ ավել, քան մինչև 2026 թվականի դեկտեմբերի 30-ը:

Պայմանագրով նախատեսված Կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի Կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.5 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան Պայմանագրով ի սկզբանե Ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման Կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.9 Կատարողն իրավունք ունի Պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման Պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի Պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի Պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ Պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի Պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն Պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱԺ աշխատակազմ	Վելոֆիրմա ՍՊԸ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19	Իրավաբանական հասցե՝ ք. Երևան, 0010,
ՀՎՀՀ 00008519	Աբովյան14
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Գործունեության հասցե՝ ք. Երևան, 0015,
Հ/Հ 900011020089	Սուրբ Գրիգոր Լուսավորիչ 4/2
ՀՀ ԱԺ աշխատակազմի	Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
ղեկավար – գլխավոր քարտուղար՝	Հ/Հ 1570015744800100
Դավիթ Առաքելյան	Տնօրեն
	Լուսիանո Կասագրանդե
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« » 2026թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-26/21 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Առավելագույն գինը գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	79111200/1	Պաշտոնական պատվիրակության անդամների հյուրանոցային ծառայությունները մատուցվելու են պատվիրատուի կողմից նախապես նշված օրերին: Ծառայությունները պետք է մատուցվեն «**Դաբլ թրի Հիլթոն հոթել Երևան**» հյուրանոցում: Հյուրանոցային համարի տեսակը՝ **Քինգ սենյակ, մեկտեղանի:** Գինը պետք է ներառի բոլոր տեսակի հարկերը, ինչպես նաև Նախաճաշ, ՍՊԱ և ֆիթնես կենտրոն, անվճար WIFI, անվճար սուրճ/թեյ/ջուր բոլոր սենյակներում (ամեն օր), թվային պահարան, արդուկ/արդուկի տախտակ, ավտոկայանատեղի:	դրամ	3000000	1	—	2026թ. հունվարի 20-ից, մինչև՝ 2026թ. դեկտեմբերի 29-ը:
2	79111200/1	Պաշտոնական պատվիրակության անդամների հյուրանոցային ծառայությունները մատուցվելու են պատվիրատուի կողմից նախապես նշված օրերին: Ծառայությունները պետք է մատուցվեն «**Դաբլ թրի Հիլթոն հոթել Երևան**» հյուրանոցում: Հյուրանոցային համարի տեսակը՝ **Քինգ սենյակ, երկտեղանի (առանձին մահճակալներով):** Գինը պետք է ներառի բոլոր տեսակի հարկերը, ինչպես նաև Նախաճաշ, ՍՊԱ և ֆիթնես կենտրոն, անվճար WIFI, անվճար սուրճ/թեյ/ջուր բոլոր սենյակներում, (ամեն օր), թվային պահարան, արդուկ/արդուկի տախտակ, ավտոկայանատեղի:	դրամ		1		
3	79111200/1	Պաշտոնական պատվիրակության անդամների հյուրանոցային ծառայությունները մատուցվելու են պատվիրատուի կողմից նախապես նշված օրերին: Ծառայությունները պետք է մատուցվեն «**Դաբլ թրի Հիլթոն հոթել Երևան**» հյուրանոցում: Հյուրանոցային համարի տեսակը՝ **Դելյուքս սենյակ, մեկտեղանի**: Գինը պետք է ներառի բոլոր տեսակի հարկերը, ինչպես նաև Նախաճաշ, ՍՊԱ և ֆիթնես կենտրոն, անվճար WIFI, անվճար սուրճ/թեյ/ջուր բոլոր սենյակներում, (ամեն օր), թվային պահարան, արդուկ/արդուկի տախտակ, ավտոկայանատեղի:	դրամ		1		
4	79111200/1	Պաշտոնական պատվիրակության անդամների հյուրանոցային ծառայությունները մատուցվելու են պատվիրատուի կողմից նախապես նշված օրերին: Ծառայությունները պետք է մատուցվեն «**Դաբլ թրի Հիլթոն հոթել Երևան**» հյուրանոցում: Հյուրանոցային համարի տեսակը՝ **Դելյուքս սենյակ, երկտեղանի**: Գինը պետք է ներառի բոլոր տեսակի հարկերը, ինչպես նաև Նախաճաշ, ՍՊԱ և ֆիթնես կենտրոն, անվճար WIFI, անվճար սուրճ/թեյ/ջուր բոլոր սենյակներում, (ամեն օր), թվային պահարան, արդուկ/արդուկի տախտակ, ավտոկայանատեղի:	դրամ		1		
5	79111200/1	Պաշտոնական պատվիրակության անդամների հյուրանոցային ծառայությունները մատուցվելու են պատվիրատուի կողմից նախապես նշված օրերին: Ծառայությունները պետք է մատուցվեն «**Դաբլ թրի Հիլթոն հոթել Երևան**» հյուրանոցում: Հյուրանոցային համարի տեսակը՝ **Քինգ Սուիթ, մեկտեղանի:** Գինը պետք է ներառի բոլոր տեսակի հարկերը, ինչպես նաև Նախաճաշ, ՍՊԱ և ֆիթնես կենտրոն, անվճար WIFI, անվճար սուրճ/թեյ/ջուր բոլոր սենյակներում, (ամեն օր), թվային պահարան, արդուկ/արդուկի տախտակ, ավտոկայանատեղի:	դրամ		1		

6	79111200/1	Պաշտոնական պատվիրակության անդամների հյուրանոցային ծառայությունները մատուցվելու են պատվիրատուի կողմից նախապես նշված օրերին: Ծառայությունները պետք է մատուցվեն «**Դաբլ թրի Հիլթոն հոթել Երևան**» հյուրանոցում: Հյուրանոցային համարի տեսակը՝ **Քինգ Սուիթ, երկտեղանի:** Գինը պետք է ներառի բոլոր տեսակի հարկերը, ինչպես նաև Նախաճաշ, ՍՊԱ և ֆիթնես կենտրոն, անվճար WIFI, անվճար սուրճ/թեյ/ջուր բոլոր սենյակներում, (ամեն օր), թվային պահարան, արդուկ/արդուկի տախտակ, ավտոկայանատեղի:	դրամ		1		
7	79111200/1	Երևան սրահ (Միլանո, Լոնդրա, Բեռլինո սրահ) – 300 քմ, Սրահի վարձակալումը ներառում է պրոյեկտոր/էկրան, հեռուստացույց փոքր սրահներում, ինտերնետ, նոթատետր/գրիչ, ջուր բոլոր մասնակիցների համար:	դրամ		1		
8	79111200/1	Երևան սրահ (Միլանո, Լոնդրա, Բեռլինո սրահ) – 300 քմ, Սրահի վարձակալումը ներառում է պրոյեկտոր/էկրան, հեռուստացույց փոքր սրահներում, ինտերնետ, նոթատետր/գրիչ, ջուր բոլոր մասնակիցների համար:	դրամ		1		
9	79111200/1	Միլանո սրահ – 200 քմ, Սրահի վարձակալումը ներառում է պրոյեկտոր/էկրան, հեռուստացույց փոքր սրահներում, ինտերնետ, նոթատետր/գրիչ, ջուր բոլոր մասնակիցների համար:	դրամ		1		
10	79111200/1	Միլանո սրահ – 200 քմ, Սրահի վարձակալումը ներառում է պրոյեկտոր/էկրան, հեռուստացույց փոքր սրահներում, ինտերնետ, նոթատետր/գրիչ, ջուր բոլոր մասնակիցների համար:	դրամ		1		
11	79111200/1	Պարիջի սրահ – 155 քմ, Սրահի վարձակալումը ներառում է պրոյեկտոր/էկրան, հեռուստացույց փոքր սրահներում, ինտերնետ, նոթատետր/գրիչ, ջուր բոլոր մասնակիցների համար:	դրամ		1		
12	79111200/1	Պարիջի սրահ – 155 քմ, Սրահի վարձակալումը ներառում է պրոյեկտոր/էկրան, հեռուստացույց փոքր սրահներում, ինտերնետ, նոթատետր/գրիչ, ջուր բոլոր մասնակիցների համար:					
13	79111200/1	Լոնդրա – 50 քմ, Սրահի վարձակալումը ներառում է պրոյեկտոր/էկրան, հեռուստացույց փոքր սրահներում, ինտերնետ, նոթատետր/գրիչ, ջուր բոլոր մասնակիցների համար:	դրամ		1		
14	79111200/1	Լոնդրա – 50 քմ, Սրահի վարձակալումը ներառում է պրոյեկտոր/էկրան, հեռուստացույց փոքր սրահներում, ինտերնետ, նոթատետր/գրիչ, ջուր բոլոր մասնակիցների համար:					
15	79111200/1	Բեռլինո սրահ – 50քմ, Սրահի վարձակալումը ներառում է պրոյեկտոր/էկրան, հեռուստացույց փոքր սրահներում, ինտերնետ, նոթատետր/գրիչ, ջուր բոլոր մասնակիցների համար:	դրամ		1		
16	79111200/1	Բեռլինո սրահ – 50քմ, Սրահի վարձակալումը ներառում է պրոյեկտոր/էկրան, հեռուստացույց փոքր սրահներում, ինտերնետ, նոթատետր/գրիչ, ջուր բոլոր մասնակիցների համար:					
17	79111200/1	Տոկիո սրահ – 50 քմ, Սրահի վարձակալումը ներառում է պրոյեկտոր/էկրան, հեռուստացույց փոքր սրահներում, ինտերնետ, նոթատետր/գրիչ, ջուր բոլոր մասնակիցների համար:	դրամ		1		
18	79111200/1	Տոկիո սրահ – 50 քմ, Սրահի վարձակալումը ներառում է պրոյեկտոր/էկրան, հեռուստացույց փոքր սրահներում, ինտերնետ, նոթատետր/գրիչ, ջուր բոլոր մասնակիցների համար:					
19	79111200/1	Չիկագո սրահ – 35 քմ, Սրահի վարձակալումը ներառում է պրոյեկտոր/էկրան, հեռուստացույց փոքր սրահներում, ինտերնետ, նոթատետր/գրիչ, ջուր բոլոր մասնակիցների համար:	դրամ		1		
20	79111200/1	Չիկագո սրահ – 35 քմ, Սրահի վարձակալումը ներառում է պրոյեկտոր/էկրան, հեռուստացույց փոքր սրահներում, ինտերնետ, նոթատետր/գրիչ, ջուր բոլոր մասնակիցների համար:					
21	79111200/1	Շվեդական 1 (20 և ավել անձի դեպքում) - 2 տեսակի աղցան, բանջարեղեն, Հաց, Սուպ, 2 տեսակի հիմնական ուտեստ, 1 տեսակի խավարտ, դեսերտ, սուրճ, ջուր, գազավորված ջրեր:	դրամ		1		
22	79111200/1	Շվեդական 2 (20 և ավել անձի դեպքում) - 2 տեսակի աղցան, բանջարեղեն, Գրիլ արած բանջարեղեն, Մսի տեսականի, Պանրի տեսականի, Հաց, Սուպ, 2 տեսակի հիմնական ուտեստ, 2 տեսակի խավարտ, դեսերտ, սուրճ, ջուր, գազավորված ջրեր:	դրամ		1		

23	79111200/1	Շվեդական 3 (20 և ավել անձի դեպքում) - 2 տեսակի աղցան, բանջարեղեն, Գրիլ արած բանջարեղեն, Մսի տեսականի, Պանրի տեսականի, Հաց, Սուպ, 1 Ձկնային հիմնական ուտեստ, 1 իտալական հիմնական ուտեստ, 2 տեսակի խավարտ, 2 տեսակի դեսերտ, սուրճ, ջուր, գազավորված ջրեր:	դրամ		1		
24	79111200/1	Շվեդական 4 (20 և ավել անձի դեպքում) - 2 տեսակի աղցան, որոնցից մեկը ծովամթերքով, աղանդեր, բանջարեղեն, Գրիլ արած բանջարեղեն, Իտալական Մսի տեսականի, Հայկական Պանրի տեսականի, Հաց, Սուպ, 1 Սաղմոնով հիմնական ուտեստ, 1 իտալական հիմնական ուտեստ, 2 տեսակի խավարտ, 2 տեսակի դեսերտ, սուրճ, ջուր, հյութ, գազավորված ջրեր:	դրամ		1		
25	79111200/1	Մատուցվող 1 բիզնես Լանչ հայկական ավանդական (20-ից պակաս անձանց համար մինչև 1 հոգի) – 6 տեսակի հայկական աղանդեր, հիմանական ուտեստ խորոված (հավ, տավար. խոզ), հայկական դեսերտ, սուրճ, գազավորված ջրեր, ջուր:	դրամ		1		
26	79111200/1	Մատուցվող 2 բիզնես Լանչ իտալական (20-ից պակաս անձանց համար մինչև 1 հոգի) – 4 տեսակի իտալական աղանդեր, Իտալական հիմանական ուտեստ, իտալական դեսսերտ, սուրճ, գազավորված ջրեր, ջուր:	դրամ		1		
27	79111200/1	Մատուցվող 3 բիզնես Լանչ իտալական 2 (20-ից պակաս անձանց համար մինչև 1 հոգի) – 4 տեսակի իտալական աղանդեր, Մսային հիմանական ուտեստ, իտալական դեսերտ, սուրճ, գազավորված ջրեր, ջուր:	դրամ		1		
28	79111200/1	Մատուցվող 4 բիզնես Լանչ Ձկնային (20-ից պակաս անձանց համար մինչև 1 հոգի) – 3 տեսակի իաղանդեր ծովամթերքներով, Ծովամթերքով հիմանական ուտեստ, դեսերտ, սուրճ, գազավորված ջրեր, ջուր:	դրամ		1		

- *Գրանցման ժամ 15:00*
- *Դուրս գրման ժամ 12:00*

Սենյակների առկայության դեպքում, մինչև ժամը՝ 09:00-ն, վաղ գրանցումը (early check in) տրամադրվում է օրավարձի կես օրվա արժեքով, իսկ ժամը՝ 07:00-ից, սկսած ժամանումները համարվում են լիարժեք օր:

Մինչև ժամը՝ 18:00-ն (late check out), սենյակը տրամադրվում է օրավարձի կես օրվա արժեքով, իսկ ժամը 18:00-ից, հետո համարվում է լիարժեք օր:

Հյուրանոցային համարների ընտրությունը իրականացվում է՝ Պատվիրատուի հետ համաձայնեցված կարգով:

Պատվիրատուի կողմից պահանջ ներկայացվելու դեպքում Մասնակիցը պետք է 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնի գրավոր հաստատում ամրագրման մասին, ներկայացնելով պատվիրատուի էլ. փոստի՝ gk@parliament.am հասցեին:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Աժ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ Աժ աշխատակազմի
ղեկավար – գլխավոր քարտուղար
Դավիթ Առաքելյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Իրավաբանական հասցե՝ ք. Երևան, 0010, Աբովյան14
Գործունեության հասցե՝ ք. Երևան, 0015, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ 4/2
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570015744800100
Տնօրեն
Լուչիանո Կասագրանդե

/ստորագրություն/
Կ.Տ

«17» 02 Հավելված N 1.1
2026թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-26/21 ծածկագրով պայմանագրի

Հ/Հ	Ծառայության			
	Անվանումը	Պահանջվող ծավալը	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	
			01.09 – 31.10.2026թ	01.01 – 30.08.2026թ 01.11-31.12.2026թ
1	Հյուրանոցային սպասարկում	Մեկ գիշեր	54,000	49,000
2	Հյուրանոցային սպասարկում	Մեկ գիշեր	60,000	55,000
3	Հյուրանոցային սպասարկում	Մեկ գիշեր	66,000	59,000
4	Հյուրանոցային սպասարկում	Մեկ գիշեր	72,000	64,000
5	Հյուրանոցային սպասարկում	Մեկ գիշեր	90,000	78,000
6	Հյուրանոցային սպասարկում	Մեկ գիշեր	96,000	84,000
7	կոնֆերանս սրահ	Ամբողջ օր	360,000	
8	կոնֆերանս սրահ	Կես Օր 4 ժամ մինչև	305,000	
9	կոնֆերանս սրահ	Ամբողջ օր	210,000	
10	կոնֆերանս սրահ	Կես Օր 4 ժամ մինչև	165,000	
11	կոնֆերանս սրահ	Ամբողջ օր	180,000	
12	կոնֆերանս սրահ	Կես Օր 4 ժամ մինչև	120,000	
13	կոնֆերանս սրահ	Ամբողջ օր	105,000	
14	կոնֆերանս սրահ	Կես Օր 4 ժամ մինչև	75,000	
15	կոնֆերանս սրահ	Ամբողջ օր	105,000	
16	կոնֆերանս սրահ	Կես Օր 4 ժամ մինչև	75,000	
17	կոնֆերանս սրահ	Ամբողջ օր	105,000	
18	կոնֆերանս սրահ	Կես Օր 4 ժամ մինչև	75,000	
19	կոնֆերանս սրահ	Ամբողջ օր	90,000	
20	կոնֆերանս սրահ	Կես Օր 4 ժամ մինչև	50,000	
21	Հյուրասիրություն	մեկ անձը	9,000	
22	Հյուրասիրություն	մեկ անձը	9,800	
23	Հյուրասիրություն	մեկ անձը	11,400	
24	Հյուրասիրություն	մեկ անձը	16,800	
25	Հյուրասիրություն	մեկ անձը	15,000	
26	Հյուրասիրություն	մեկ անձը	15,000	
27	Հյուրասիրություն	մեկ անձը	16,000	
28	Հյուրասիրություն	մեկ անձը	18,000	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար – գլխավոր քարտուղար՝
Դավիթ Առաքելյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
Իրավաբանական հասցե՝ ք. Երևան, 0010,
Աբովյան14
Գործունեության հասցե՝ ք. Երևան, 0015,
Սուրբ Գրիգոր Լուսավորիչ 4/2
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570015744800100
Տնօրեն
Լուչիանո Կասագրանդե

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«17» 02 . 2026թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-26/21 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հերթական համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1-28	79111200/1	Ներկայացուց-չական ծառայություններ /4237/	-	3000000	3000000	3000000	3000000	3000000	3000000	3000000	3000000	3000000	3000000	3000000	3000000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար – գլխավոր քարտուղար՝
Դավիթ Առաքելյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Իրավաբանական հասցե՝ ք. Երևան, 0010,
Աբովյան14
Գործունեության հասցե՝ ք. Երևան, 0015,
Սուրբ Գրիգոր Լուսավորիչ 4/2
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570015744800100
Տնօրեն
Լուչիանո Կասագրանդե

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
«17» 02 2026թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-26/21 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1

«17» 02 2026թ. կնքված
<< ԱԺ ՄԱԾՁԲ-26/21 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
«17» 02 2026 թ. կնքված

ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-26/21 ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .

ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված

պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի

կատարողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.9 կետով սահմանված պահանջներին:

_____ _____

ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.